

**«ԹԱՏՐՈՆ» ԵՐԳԻՄԱԹԵՐԹԻ ՀԱՅԱՏԱՆ-ԹՈՒՐԿԵՐԵՆ
ՔՍՂԱՔԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՆԵՐԸ**

ՄԱՐԿԱՐԻՏ ԸՐԴԱԹԱՇՅԱՆ

XIX դ. երկրորդ կեսին արևմտահայ իրականությունն ապրում էր քաղաքական ու մտավոր կյանքի վերափոխման անհրաժեշտության զգացում: Հասարակական նոր հարաբերությունները, ազգային զարթոնքը, թուրքական բռնապետության դեմ հայ ժողովրդի պայքարը առաջ բերին հասարակական երգիծանքի պահանջ՝ խարազանելու և մերկացնելու տիրող դասակարգերի անիրավություններն ու շարագործությունները: Հանդես են գալիս Հարություն Սվաճյանը, Հակոբ Պարոնյանը, Բելիարը և ուրիշներ, որոնց երգիծական ստեղծագործությունները հայ իրականության սոցիալ-քաղաքական իրադարձությունների ծնունդն էին և ունեին սոցիալական խոր հազնցվածություն: Բայց հայ երգիծաբանության փառքը, նրա բարձրակետը դարձավ Հ. Պարոնյանի ստեղծագործությունը: «Մեղվի» խափանումից հետո, 1874 թ. ապրիլից, նա լույս է ընծայում «Թատրոն» երգիծաթերթը, նոր էջ բացելով հայ նոր գրականության սլաոմության մեջ:

«Թատրոնում» տպագրված նյութերն ուշագրավ են բարձրացվող հարցերի սոցիալական սրությանը ու թեմատիկայով: Համիդյան դաժան ուժերի պայմաններում երգիծաբան Պարոնյանը պահպանում ու զարգացնում էր վաթսուներկան թվականների հայ դեմոկրատական գրականության ավանդները:

«Թատրոնը» անհուն ատելություններ սկսեց պայքարել հասունացնելու դեմ, մերկացնել Պոլսի ազգային մարմինների հակաժողովրդական վարքագիծը, Թուրքիայի ներքին ու արտաքին քաղաքականությունը, քննարկել միջազգային քաղաքականության հարցեր:

Երգիծաթերթում հայերեն գրված ուշագրավ էջերի կողքին տպագրվում էին նաև հայատառ-թուրքերեն բազմաթիվ ստեղծագործություններ և հրապարակախոսական ակնարկներ, որոնք նույն սրությամբ մերկացնում էին թուրք բռնապետության ու եվրոպական գաղութարարների՝ հայ ժողովրդի ազգային մասնատման քաղաքականությունը:

Հայաառ-թուրքերեն քաղաքական քրոնիկները պատկերացում էին տալիս 70—80-ական թվականների Թուրքիայի ներքին կյանքի ու հասարակական-քաղաքական անցուդարձերի մասին, ինչպես նաև ցուցադրում երգիծաբան-խմբագրի քաղաքական գիտակցության և գեղարվեստական վարպետության հզոր ուժը:

Նախասովետական շրջանի պարոնյանագետները ուսումնասիրության նյութ չեն դարձրել երգիծաբանի հայատառ-թուրքերեն երկերը, որոնք ունեն նույնպիսի գեղարվեստական-գաղափարական արժեքներ, ինչպես նրա հայերեն երկերը: Միայն 1959 թ. Գ. Մադոյանն իր «Հակոբ Պարոնյան» գրքում

խոսում է երգիծաբանի հայատառ-թուրքերեն երկերի մասին¹, իսկ ավելի ուշ թատերագետ-բանասեր Գ. Ստեփանյանը զբաղվեց երգիծաբանի թուրքերեն ժառանգության մեջ և «Հակոբ Պարոնյան» ուսումնասիրության մեջ մի գլուխ հատկացրեց այդ երկերին²։

Այնուամենայնիվ, համեմատաբար քիչ է գրվել մեծ երգիծաբանի թուրքերեն ստեղծագործությունների մասին, իսկ «Թատրոն» հայատառ-թուրքերեն քաղաքական սատիրայի մասին՝ գրեթե ոչինչ։

«Թատրոն» երգիծաթերթում հայատառ-թուրքերեն քաղաքական քրոնիկեն-րով հանգես են եկել և՛ Պարոնյանը, և՛ Բելիարը³, որը 1875 թ. հունվարից ապրիլ եղել է թերթի խմբագիր-տնօրենը։ Աշակերտելով Պարոնյանին, Բելիարը գիտակցաբար հետևում էր նրան, չմնալով, սակայն, սոսկ կրկնողի գերում։ Պարզ հոգեբանական վերլուծումներով երգիծաբանը հասնում էր փայլուն արդյունքների և քաղաքական թեմաներով գրված սատիրական երկերում ընթերցողի առջև բաց էր անում մի նոր աշխարհ։ Նա ոչնչացնող ծաղրի էր ենթարկում սուլթանական կառավարությանը, պետական գործիչներին, օտարերկրյա իմպերիալիստներին։

Բելիարը ձգտում էր օգնել ժողովրդին տվյալ իրականության, ժամանակաշրջանի ու քաղաքականության մասին ճիշտ պատկերացում կազմելու, թափանցելու շարիքի արմատները և, որ ամենակարևորն է, զինվելու ու պայքարելու նրա դեմ։ Դժվարին պայմաններում Բելիարը շարունակում էր ասել էշմարտությունը, ո՛չ մի քայլ ետ չկանգնելով իր ընտրած փշոտ ճանապարհից։ Նրա հայատառ-թուրքերեն երկերում դեմոկրատական ռեալիզմը վկայում է, որ արևմտահայ կյանքում ժողովրդական խավերի քաղաքական զարթոնքը զրականության համար աննկատ չի մնացել։

«Թատրոնում» լույս տեսած հայատառ-թուրքերեն քաղաքական սատիրան ընդգրկում է երկու բնագավառ՝ սուլթանական Թուրքիայի ներքին իրավիճակի ու արտաքին քաղաքականության մերկացում և եվրոպական տերությունների վերաբերմունքի քննադատություն։

Մեծ երգիծաբանն ու Բելիարը երգիծաթերթի «ներքին», «Հայտարարություն» բաժիններում անխնա քննադատում ու ձաղկում են սուլթանական կառավարության ծիծաղելի «անկախությունը», նրա անճարակությունն ու տգիտությունը, որ առանց օտարերկրյա գործիչների Թուրքիան ինքնուրույն ո՛չ մի հարց չի լուծում։ Երկիրը ղեկավարում են բիսմարկներն ու մակ-մահոնները։

Հայատառ-թուրքերեն քաղաքական սատիրայում ուշագրավ են հատկապես «Թելեգրաֆիկ» («Հեռագրալուր») բաժնում տպագրված Բելիարի քրոնիկները, որոնց ոգին ու ոճը երբեմն այնքան նման է Պարոնյանի քրոնիկներին, որ կարելի էր շփոթել, եթե չլինեք «Բելիար» ստորագրությունը։ Այս բաժինը հարուստ է արտասահմանյան լուրերով, որոնք ընթերցողին գաղափար են տալիս միջազգային կյանքի բազմազան խնդիրների ու անցուղարձերի մասին։

«Վիեննա, փետրվարին մեջտեղը».

1 Գ. Մ ա գ ո յ ա ն, Հակոբ Պարոնյան, Երևան, 1960։

2 Գ. Ս տ ե փ ա ն յ ա ն, Հակոբ Պարոնյան, Երևան, 1964։

3 Մեր կարծիքով, այդ ծածկանվան տակ թաքնված է Գաբրիել էզաճյանը (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1972, № 6, էջ 57)։

Բորսան քիչ մը հիվանդ է, կուրծքին սպեղանի փակցուցին⁴։

«Վիեննա, 27 փետրվարի

Բորսան երբեմն կը փափկի, երբեմն կը կոշտընա և երբեմն, երբեմն հոփը հոփը կը ցատկի։ Բորսաճիները հակառակ ասոր երբեմն կուլան, երբեմն կը խնդան և երբեմն ալ թիրիլ թիրիլ կը դողդողան կոր։ Գործ ընողները աս եղանակին գործ կըլլա մը կըսեն, շընողներն ալ պարապ կը կեցվի⁵ մը կը պոռան և ասանկով բավական իրարանցում կըլլա կոր, չըլլա նե, ամթա⁶։

Այժմ տեսնենք, թե միջազգային շուկայի մասին ինչ է գրում Պարոնյանը. «Վիեննայեն հետաքրքիր հեռագիրներ կուզան կոր. հեռագիր մը կ'ըսե, որ գործ չըլլալու պատճառով բորսան կանգնած է. ուրիշ հեռագիր մ'ալ կ'ըսե, որ բորսան կանգնած ըլլալուն պատճառով գործ չըլլար կոր. կամ ալի վելի, կամ վելի ալի Դրամ չի կա, և վե՛րջ, պապադ ինչե՛ն մեռա՛վ. կաթվածեն... գործ չի կա եղեր դե, բորսան կանգնած է եղեր... մենք իրարու գիտենք յա. այլևս դուք գործ չունիս նե, ուզածիդ պես խոսե՛ք»⁷։

Պակաս ուշադրով չեն նաև հայատառ-թուրքերեն այն քրոնիկները, որոնց մեջ երգիծաբան Բելիարը անխնա ծաղրել ու քննադատել է առա՛նձին անհասունների և եվրոպական քաղաքական գործիչների։ Օրինակ, իսպանացի գահի հավակնորդ Դոն Կարլոս կրտսերի մասին Բելիարը գրում է. «Սա Դոն Քարլոսն ալ կերթա կուգա ամեն մեկ գործին մեջ կը մտնա, ասոր համար ալ որքան գործ կար նե, մեկտեղ բանտարկվեցան, որ Դոն Քարլոսը չը տեսնա և գլուխ չը հաննա»⁸։

Թագավոր Դոն Ալֆոնսի մասին երգիծաբան Պարոնյանը գրում է. «Իշտե ասիկա չեղավ... ես ասիկա չհավնեցա։ Մարդ մը մարդկությունը չպետք է կորսնցունեն... Հրամանեց՛ք նայինք, վայլեցա՛վ մը հիմա աս եղածը։ Կերևա, թե դուք լուր չունիք դե չեք անհանգստանար կոր. պարոնս, Դոն Ալֆոնսին ի՞նչ ընեն— կհավնիք. շոճուխին բռներ ծեծեր են. ծեծեն ետքն ալ աղվոր մը հայհոյանքներ ըրեր են. եղա՛վ մը ասիկա. ըլլա՛իք բան է ասի։ Դեռ մինչև հիմա ալ խեղճ շոճուխին ցույցեր կընեն կոր։ Յույցը ի՞նչ է եղեր, պարոնս. իրավունք ունիս նե, բանակի՛ն հետ հաշիվդ մաքրե, սա խեղճեն ի՞նչ կուզես կոր։ Աս խեղճերուն հոս եկեք նստեք ըսին, անոնք ալ եկան ու նստեցան։ Դուք ալ հիմա՛ դուրս եկե՛ք, կըսեք կոր, խեղճերը երկու սուրին մեջտեղը մնարեր են, դո՛ւրս գան, յա՛ մնան...»⁹։

Այստեղ Պարոնյանը բացարձակ պայքարի կոչ է անում ժողովրդին, վարագործված ձեռով նկատելով, թե հարկավոր է նախ օտարերկրյա ռաջանակին հետ հաշիվ մաքրել և հետո միայն՝ սուլթանական կառավարության։ Իսկ «Հեռագրալուրք» հաղորդագրության մեջ նա գրում է. «Դոն Ալֆոնսին բանակը Դոն Քարլոսին հետ պատերազմ չընելով ձանձրացեր է, դոն քարլոսներն ալ պարապ մնալով ժամանցի համար իրարու դեմ պատերազմեցան։ Սակայն քարլոսականներն շատերը աս ժամանցը չհավնելով, անցան Ալֆոնսին կողմը. պետք է երթան հապա՛, բայց չըլլա, որ հետո զղջան, ալֆոնսականներուն հետ

⁴ «Թատրոն», 13. II. Հայատառ-թուրքերենից այս և հետագա մեջբերումների թարգմանությունները մերն են—Մ. Ը.։

⁵ Նույն տեղում, 18. II։

⁶ Նույն տեղում, 19. IV։

⁷ Նույն տեղում, 1. II։

⁸ Նույն տեղում, 19. IV։

հղբայր ըլլալնուն պես նախկին կոյեզաներուն գործողությունը անոնց հետ սկսին, երեսանհրուն վախցրնեն:

— Է՛, ի՛նչ ընելու է. անոնք ալ երեխայութիւն չընեն դե, չը վախնան...»⁹:

Արեւմտահայ երգիծաբաններ Հ. Պարոնյանն ու Բելիարը և ուրիշ մեծ երգիծաբան Ս. Շչեդրինը, բոլորովին միմյանցից անկախ քննադատել են բիսմարկյան Գերմանիան, նրա քաղաքականութիւնը և հանգել համանման եզրակացութիւններ: Շչեդրինը բիսմարկյան Գերմանիան համարում էր ռադամով մի երկիր, որը պատերազմ էր սպառնում ամբողջ աշխարհին, հանդիսանալով հետադիմության նեցուկ Եվրոպայում, Գրականագետ Գորյաչկինան գրում է. «Շչեդրինը կարեկցում էր գերմանական ճնշված աշխատավոր ժողովրդին, ամբողջ հողով ատելով Գերմանիայի ռադամով բուրժուազիային, արհամարհելով գերմանական քաղքենի-բյուրգերներին իրենց տղիտութիւն, ազահութիւնն ու հոգեկան սահմանափակվածութիւնը համար...»¹⁰:

Բելիարը եռլեզան Բիսմարկի քաղաքականութիւնը համարում է վտանգավոր ամբողջ աշխարհի խաղաղութիւնը համար: Նա սարկազմի մեծ ուժով ձաղկում է տիրող դասակարգի ներկայացուցիչների քաղաքական ու բարոյական կիրպւնները: «Վերուայ, 26 փետրվարի» հայատառ-թուրքերեն լուրերում Բելիարը գրում է, որ ամեն մի մահկանացու ցանկանում է դեկավարել գերմանական բանակը, դառնալ գեներալ: Այդ բարձր աստիճանին հասնելու համար առաջարկվում է խաղալ «կաղ աքլորի խաղը», որին պիտք է մասնակցեին մի շարք պատգամավոր իշխանապետներ և իշխանադուստրի: Կաղ աքլորը ում որ բռնեի խաղի ընթացքում, նա էլ պիտի գրավեր պաշտոնը՝ վերամկրտվելով կամ «դիքթատոր», կամ «իմպերատոր», կամ էլ «թագավոր»: Վերջում հեղինակը ավելացնում է՝ «Ասոր համար մեծ սալն մը բացվել է: Ով կուզե մասնակցել թոփալ խորոզին խաղին, թո՛ղ հրաման»¹¹:

Երգիծաբանի ժաղըր չի սահմանափակվում առանձին անհատներով, Հայատառ-թուրքերեն քաղաքական քրոնիկներում նա քննադատում է նաև տարբեր կուսակցութիւնների: Այդ քրոնիկներում ընդհանրացման մեծ ուժով արտացոլված է երգիծաթերթի դիրքորոշումը ժամանակի հոսանքների նկատմամբ: Այսպես՝ «Հանրապետականներին գործը հունի մեջ մտավ. վալոնին առաջարկը միաձայն ընդունվեցավ. այսինքն՝ ճշմարտութիւնը բան մ'ալ չեղավ. վիճակահանութիւն ժամանակ սոֆու հանրապետականները մեկ կողմի և սոֆու մոնարխները մյուս կողմի աղոթքի ելան, աչքերնին վիճակի սունդուկին հառելով սպառնացին, որ եթե միայն հանրապետական կամ միայն մոնարխի հայտարարելու սատանայութիւն մը չհանե նե, բռնածին պես սունդուկը դիքթատոր պիտի ընեն. ասոր վրա սունդուկը գիտակցութիւնը կորսնցունելով՝ այնպիսի բան մը հայտարարեց, որ ո՛չ հանրապետականի նման է և ո՛չ ալ մոնարխի»¹², — գրում է Բելիարը: Ինչպես տեսնում ենք, այստեղ Բելիարը ձաղկում է ժամանակի վուսակցութիւնների անգործությունը, անճարակցությունը, կեղծ քաղաքականությունը:

«Թատրոնի» հայատառ-թուրքերեն քաղաքական քրոնիկներում հետաքրքրական է եվրոպական քաղաքականութիւնը քննադատութիւնը հատկաց-

9 Նույն տեղում, 27. III:

10 М. С. Горячкина, Сатира Салтыкова-Щедрина. М., 1965, стр. 151.

11 «Թատրոն», 18. II. 1875:

12 Նույն տեղում:

ված բաժինը, որն անընդհատ փոխում էր իր վերնագիրը՝ «Բուլիթիքա շուրուպու» («Քաղաքական ուղարակ»), «Բուլիթիքա շորպասը» («Քաղաքական ապուր»), «Բուլիթիքա թուրշուսու» («Քաղաքական թթու») և այլն:

Այս խոստով խորագրերից՝ «Քաղաքական ուղարակ» բաժնի քրոնիկներում այլաբանորեն արտացոլված է քաղաքական լուրերի իբր «նախանձելի» վիճակը, որոնք, սակայն, վեր են հանում դառը ճշմարտություններ. «Քաղաքական խաբեություններն բերաննիս աճըցավ (դառնացավ) դե, ուղարակի անցանք: Քաղաքականությունը երկու ամառային սեզոններուն հետևանքով այժմ արյուն մաքրելիք դեղերով մարմինը կը բուժե կոր»¹³:

«Բուլիթիքա թուրշիսի» («Քաղաքական խառնուրդ») բաժնում ծաղրված է եվրոպական պաշտոնական մամուլը, որ լեցուն է շաղակրասանքով: Մարդիկ կարդալով այդ լուրերը, իրենք էլ վարժվում են անմիտ, դատարկ խոսակցությունների:

Վերոհիշյալ քրոնիկներում Պարոնյանը շարունակում է պայքարը օտարերկրյա գաղութարարների դեմ: Հայտնի է, որ Անգլիան իր գաղութարարական գործունեությունը փորձում էր արդարացնել Արևելքում քաղաքակրթություն տարածելու քողով: Այդ քրոնիկներում հեղինակը պատռում է Անգլիայի դիմակը և նշում, որ նրան հետաքրքրում է միայն իր տնտեսական շահը: «Արտասահման» վերնագրի տակ կարդում ենք. «Անգլիային աղեկը չի կա. գործը հաջողի կապեր, կողքի է պառկեր, ակնոցները դրեր, բանքան քանի միլիոն ոսկի մտնալն ու որքան ելլալը կը դիտե... լա՛վ, բայց անգլիական բանքան այսքան միլիոն ոսկի մտնալն, կամ ալ ելլալը մեզի ի՞նչ, պարոնս, կարծես մենք անոց կը հարցունենք, շտապ-շտապ հեռագիրով կիմացունեն, թե բանքան ասքան ոսկի մտեր է, կամ ալ ելեր է. մեր բանքաներն ալ ոսկի կը մտնա և կ'ելա, բայց մենք կը լրսցնե՞նք, հրամմեցե՞ք նայիմ, ո՞վ գիտե, ի՞նչ է մտեր, ելեր. մտածը ելածը ոչ մեկը չի դիտեր, արդեն չպիտի ալ դիտնա: Ճիշտը այս բանը սիրտիս ցավ եղած էր, ըսի դե, աս ցավեն ազատեցա»¹⁴:

Եվրոպական քաղաքականության անկայունությունը, տատանողական դիրքն է քննադատված «Բուլիթիքա սալաթասը» («Քաղաքական աղցան») բաժնում. «Քաղաքականությունը ընկերության առաջին համար նավին պես երկու կողմի կօրոքվի» — դրում է Պարոնյանը¹⁵: Եվ ապա շարունակում. «Եվրոպային մեջ մեկ ընդհանուր և թվային լեզու ստեղծեր են, կը ստեղծեն կոր, կամ ալ պիտի ստեղծեն: Այս լեզուին շնորհիվ իրարու լեզու չհասկըցողները հիմա պիտի հասկընան եղեր»:

Օրինակի համար, կրակ բառին համար 29 թիվը պիտի դրվի, ջուրին համար՝ 10 թիվը, կաթին համար՝ 15, կաթին մեջը ջուր խառնած են նե, այն ատեն՝ 25, բեր բառին համար՝ 32...»¹⁶: Դեմտկրատ մտածողն ընդգծում է, որ մարդիկ բառերով չեն կարողանում միմյանց լեզու հասկանալ և անընդհատ կովում են, ուր մնաց չոր թվերով:

«Բուլիթիքա թուրշուսու» հայատառ-թուրքերեն քրոնիկում Պարոնյանը ծաղրում է եվրոպական դիվանագետներին և առանձին քաղաքական գործիչ-

13 Նույն տեղում, 29. VI. (բնագիրը հայերեն):

14 Նույն տեղում, 5. IV:

15 Նույն տեղում, 7. VI:

16 Նույն տեղում:

ների: Նա գրում է. «Լսեցի՞ք քանի մը շաբաթ առաջ Բուլիթիքային դրած թղթին ի՞նչ եղեր է: Էֆենտիս, Ֆրանսան մեծցուցեր է իր բանքան, այս պատճառով ալ մեր բարեկամ Պիզմարքին (այսինքն Գերմանիայի— Մ. Ը.) ստամոքսը պղտորվեր է և իրեն պաշտպանելու համար որոշեր է Ֆրանսային շուտ սլատերազմ սկսիլ»¹⁷:

Այնուհետև, «Բուլիթիքա շորպասը» վերնագրի տակ երկրօժաբանը շարունակում է քննադատել պետական բանկերի անկայունությունը: Օրինակ՝ անդլիական բանկի համար Պարոնյանը գրում է, որ բանկ մտնող և դուրս ևկող ոսկիները միմյանց հետ ճակատամարտեցին, քիչ էր մնում մեծ պատերազմ սկսվելու: Շատ զարմանալի է, որ այս երկրում ոսկիներն էլ կռվելու համար ոչ ոքի հերթ չեն գիշում:

Նույն խնդիրների կապակցությամբ Բելիարը գրում է.

«Լոնարա, այս օրերս.

Բանքանիս մեջ տեղ չմնալու պատճառով, դրամներին մեծ մասը դուրս կը հանենք կոր. ով ավելորդ տեղ ունի նե, փողոցին մեջ, դուռին առջև թող սպասե...»¹⁸ և այլն:

Ապա հաջորդում է մի շրջան, երբ քաղաքականությունը դոփում է տեղում, եվրոպական դիվանագետները քուն են մտնում, իսկ հայկական հարցով ոչ ոք չի զբաղվում: Երգիծաբան Պարոնյանը հարց է տալիս՝ ի՞նչ եղավ հայկական խնդիրը և «Իմ ձեռատետրս» հայերեն քրոնիկներում պատասխանում. «Անգղիո կառավարությունն այժմ ուրիշ խնդիրներով զբաղած ըլլալով՝ հայկական խնդիրը քիչ մը մոռցած ըլլալ կը թվի. սակայն անգղիացիներ հայերը կը հուսան, թե Անգղիո կառավարությունն վերստին ձեռք սիտի առնե Զայաստանի բարեկարգության խնդրն, զոր այնչափ եռանդով պաշտպանեց:

Խնդիրներ կան, որ պտուղներու կը նմանին, պահվելով կը հասունան, թեպետև կան ալ, որ պահվելով կը փտտին:

Աղոթենք, որ մեր խնդիրն վերջիններեն ըլլա»¹⁹,

Ինչ վերաբերում է Ֆրանսիային, ապա՝ «...Ֆրանսան հին բաղնիք, հին թաս է, ո՛չ ձայն կա, ո՛չ աղմուկ. ժամանակին աչ կողմի և ձախ կողմի խռակցություն մը կարու Կ'երեկ, թե հիմա աչը ձախը կորսնցուց դե ձայն չի հաներ, ֆինանսներին միևիուտը գերմանական դեսպանին բանկետ մը տվեր է, արտասահմանյան մյուս դեսպաններն ալ այս խնջույքին ներկա գտնվեր են: Ամեն մարդ բանկետ մը բռներ կերթա, Աստված հաջողություն տա» — գրում է երգիծաբանը «Քաղաքական ծաղկաքաղ» հայատառ-թուրքերեն քրոնիկում²⁰:

Հակոբ Պարոնյանը լավ գիտեր, որ օտարերկրյա կապիտալի ներկայացուցիչները Արևելք էին գալիս ոչ թե հայկական հարցը լուծելու, այլ՝ իրենց հանգիստն ու հաճույքը վայելելու: «Թատրոնի» հայերեն քրոնիկներում զարգացնելով վերոհիշյալ միտքը, նա գրում է. «Խաղաղության հրեշտակները ամիսի մը չափ մայրաքաղաքիս մեջ ուտելեն, խմելեն ու զվարճանայեն ետրը քիչ օրեն պիտի մեկնին... ո՛րչափ աղեկ կըլլար, եթե իրենք բնավ չգային ու լուսանկար պատկերներն կամ այցեւորմանին ղրկեին դեսպանաժողովին:

17 Նույն տեղում, 24. V:

18 Նույն տեղում, 13. II:

19 «Փորձ», 1880, էջ 134:

20 «Թատրոն», 19. IV. 1875:

Նրթան բարյավ...»²¹,

Քաղաքական նմանօրինակ հայատառ-թուրքերեն քրոնիկներ ունի նաև Բելիարը։ Արևմտահայ երկու երգիծաբանների վերոհիշյալ քրոնիկները քաղաքական դեպքերի յուրօրինակ տարեգրություն են, որտեղ նրանք արձագանքում էին քաղաքական կարևոր անցուգարձերին, գրանք լուսաբանում դեմոկրատական ոգով, բացահայտում եվրոպական գաղութարարների նվաճողական քաղաքականության վտանգավորությունը։

«Թատրոնի» հայատառ-թուրքերեն քաղաքական երգիծանքում ինքնատիպ ստեղծագործություն է Բելիարի «Լոնտրա, փետրվար» քրոնիկը։ Քաղաքական տեսաբանը այստեղ ևս իր անողոք խարազանը շառաչեցնում է եվրոպական գաղութարարների թալանչիական գործողությունների դեմ, քննադատում, դիմակազերծ անում նրանց կեղծ քաղաքականությունը։ Գաղափարական ու գեղարվեստական մտահղացման զարմանալի պարզություն ու անմիջականություն կա այս ստեղծագործության մեջ. «Այստեղ այնտեղ մեծ-մեծ խոսողները և այսպես պիտի ըլլա, այնպես պիտի ըլլա ըսողները պզտիկ չձգելու համար, հոս խաղաղության բերքերեն աղցան մը պատրաստեցին պալատ ուղարկելու համար։ Շատերը կարծեցին, որ իրենց ալ բաժին պիտի հասնի, այդպես բան կըլլա՞ մը. մեկ աղցանը ո՞ր մեկին կը հասնի. ուրիշ պարտեզ նայե՛, սիրելիս», — գրում է հեղինակը²², Բողոքի ու ցասման իր այս խոսքում Բելիարը զարմանք է հայտնում, թե ո՞ր մեկին բաժին կարող է հասնել մի պնակ աղցանը՝ փոքրիկ Հայաստանը, որ կռվախնձոր էր դարձել հզոր տերությունների ձեռքերում։ «Լոնտրա, փետրվար» հայատառ-թուրքերեն քրոնիկում նրա օգտագործած չափազանցությունը (հիպերբոլան) կառուցված է հեղինակի հեռատես ենթադրության համապատասխան՝ հիմնված պատմական անցուդարձերի խոր իմացության վրա։ Երգիծաբանը չի կարողանում հաշտվել ժամանակի իրականության հետ։ Նրա զայրույթը մնում է հետևողական։ «Թատրոնում» առանձնահատուկ տեղ է գրավում վճռական այն պաթարը, որ Բելիարը, իր ուսուցչի հետևությանմբ, մղել է եվրոպական գաղութարարների դեմ։

«Թատրոնի» քաղաքական երգիծանքի լավագույն ստեղծագործություններից է Պարոնյանի «Բոլիթիբա րույասը» («Քաղաքական երազ») քրոնիկը, որն ունի հարուստ ենթատեքստ և հետաքրքիր կառուցվածք։ Երգիծաբանն այստեղ տալիս է քնած քաղաքականության պատկերը և նշում, որ այն, անշուշտ, քնած ժամանակ էլ որևէ բան մտածում է, իսկ այդ մտածումների իրականացումը ընթերցողը կտեսնի քաղաքականության արթնանալուց հետո. «...երազ ըսածնիս, հայտնի է յա, մեկ մարդուն միտքին մեջ ինչ ըլլա նե. անոր վերաբերող երազներ կը տեսնա...», ապա Գերմանիայի բռնած դիրքից ելնելով, հեղինակը եզրակացնում է, որ նա պատերազմ է ցանկանում²³։

Յրանսիան նույնպես անհանգիստ է քնում, իսկ խորամանկ Անգլիան քնում է շատ հանգիստ, քանի որ «ո՛չ լու կա, ո՛չ էլ ոչիլ»։ «Քաղաքական երազ» ֆելիետոնի սուր գաղափարական նպատակադրությունը լիովին բացահայտվում է նրա բազմանշանակ ու խորիմաստ բովանդակության մեջ։ Նվ ըմբոստ երգիծաբանը բողոքում է Արևմուտքի կեղծ քաղաքականության, բուրժուական

21 Նույն տեղում, 5. I. 1827:

22 Նույն տեղում, 1. II:

23 Նույն տեղում, 24. VI:

մամուլի, հայ ժողովրդի թե՛ ներքին և թե՛ արտաքին թշնամիների դեմ: Նույն ազատագրական պայքարի կոչ է անում աշխատավոր ժողովրդին և հայկական հարցի լուծումը կապում համագործակցության, հետևողական պայքարի հետ, նկատի առնելով, որ հայ ժողովրդի ազատալիրական ոգին անշիջանելի է:

«Հունաստանեն եկող լուրերեն ալ բան մը շինք հասկընար. մյուսյու Վսալաթին այսպես եղեր է, մյուսյու Սիմոնը այնպես եղեր է, մյուսյու Ֆանթուրիսին այդպես եղեր է, մյուսյու Թրիքուրին այսպես եղեր է, մյուսյու Պյուկարիսը այդպես չպիտի ըսե եղեր, շատ աղեկ, ասոնց վերջը չի կա, շտարվելը ի՞նչ է, պարոնս, ձեռք ձեռքի տալով աշխատիք չը՛լար...»²⁴: Այսպիսով, Պարոնյանը հույների օրինակով խոսքն ուղղում է հայ ժողովրդին և ընդգծում, որ անհատները ոչինչ անել չեն կարող, հարկավոր է սերտ համագործակցություն և ընդհանուր պայքար: Միայն ակտիվ պայքարով կարելի է ձեռք բերել ազատություն:

«Թատրոնում» տպագրված հայատառ-թուրքերեն քաղաքական քրոնիկները գրված են սեղմ, լակոնիկ ոճով: Սակայն այդ սեղմության մեջ արտահայտվում են խոր գաղափարներ: Ա. Տերտերյանը «Հայ կլասիկներ» աշխատության մեջ անդրադառնալով Պարոնյանի ոճին, նկատել է. «Թեկի երկարն է լավ, խոսքի՝ կարճը»: Այս սկզբունքով էլ ընթացել է երգիծաբանը թե՛ հայերեն և թե՛ հայատառ-թուրքերեն ստեղծագործություններում: Նրա ոճը պարզ է, հասարակ: Մեծ երգիծաբանը ընդհանրապես մերժել է այն հայերենը, որը կազմված է «ընտրված բառերու փունջեն»: Մնալով ժողովրդի զավակը, նա հասունացել է՝ խմելով ժողովրդական ստեղծագործության անսպառ աղբյուրից, և իր սատիրան օգտագործել է ժողովրդի թշնամիների դեմ:

Մեծ է խմբագիր Պարոնյանի ազդեցությունը երգիծաբան Բելիարի ստեղծագործության վրա: Երկու երգիծաբաններն էլ ուղեցույց ունենալով լեզվի հասկանալիության, սեղմության և պարզության խնդիրը, ցանկանում էին իրենց քարոզած գաղափարները ժողովրդին մատուցել պարզ ու հստակ ձևերով: Այդ պատճառով էլ քննադատներից ոմանք Պարոնյանին մեղադրել են գոեհնարանության մեջ (Ա. Չոպանյան), որ սակայն անհիմն է: Պարոնյան երգիծաբանը հիանալի գիտեր գրական հայերենն ու թուրքերենը և հարկ եղած դեպքում ճաշակով օգտագործում էր երկուսի բառապաշարն էլ:

Բելիարի հայատառ-թուրքերեն քաղաքական քրոնիկների մեծ մասը գրված է ժամանակի թուրքական թերթերի պաշտոնական լեզվով՝ օսմաներենով (որը լի է արաբերեն ու պարսկերեն բառերով, դարձվածներով) և տարբերվում է նրա հայատառ-թուրքերեն գեղարվեստական ստեղծագործությունների ոճից: Այստեղ Բելիարը հետևել է թուրքական, արաբական ոճի բարգուծյանը:

Հայատառ-թուրքերեն քաղաքական քրոնիկների լեզուն վկայում է և՛ Պարոնյանի, և՛ Բելիարի թուրքերեն լեզվի գերազանց իմացությունը: Ուշագրավ է այն սկզբունքը, որով առաջնորդվել է Բելիարը քաղաքական քրոնիկները գրելիս: Թուրքիայի տնտեսական թշվառությունը ձաղկելիս նրա խոսքը զուսպ է, իսկ երբ քննադատում, ծաղր ու ծանալի է ենթարկում եվրոպական պետությունների քաղաքականությունը՝ գրում է վերամբարձ, խրթին թուրքերենով:

²⁴ Նույն տեղում, 8. VI:

«Թատրոնում» տպագրված քաղաքական քրոնիկները արտահայտչական մեծ ուժ էին ստանում ճաշակով մշակված, հղկված լափազանցությունների, խոսքի կոմիդիի, սրամիտ համեմատությունների և դիպուկ բնութագրումների շնորհիվ: Կյանքի տ ժամանակի դեպքերի կատարյալ իմացությունը, դիտողությունների նրբությունն ու սրությունը երպիծաբաններին դարձրել են սրամտությունների գյուտարարներ: Բնիկարն, օրինակ, գրում է. «Գաղղիո մեջ կերևի, թե բոիշկները այս մասին (քաղաքականության հիվանդության— Մ. Լ.) շատ ուշադրություն կընեն կոր. կըսվի թե, եթե մինչև հիմա Գաղղիո մեջ չորս միլիոն քիթ ուռած է, համեմատաբար չորս հարյուր ուղեղ փտած պիտի քլլա. որովհետև բոշկական նոր մեթոդով մը գտնված է, թե տասն հազար մարդու քիթ ուռի են, մարդու մը ուղեղ կը փտի:

Քիթեռուն այս վիճակին վրա ավելցուր նաև մտմտուքի խնդիրը. միլիոն մը մտածողի մեջ հարյուրին չորսական մատներն ու ծնոտները կը մաշին եղեր. այս հաշվով, թե որ հիմա Գաղղիո մեջ միլիոն մը մտմտածող կա, հարյուր հատ ալ մաշած ծնոտ և չորս հարյուր մաշած մատ կա. ասկե կընա հետևցվի, թե Գաղղիո օրենսդրական նոր կազմակերպության մեջ այդ հարյուր մաշած մատներն ի՞նչ կըցած են և ի՞նչ կարող են ընել»²⁵:

Պարոնյանի «Քաղաքական շրթներկ» հայատառ-թուրքերեն քրոնիկում կարգում ենք. «Քաղաքականությունն ալ քիչ մը զարգարել պետք չէ՞ մի յա... քանի որ քաղաքականության մաղբը շատ խառնվեցան այս օրերս, սանրելու, քիչ մ'ալ շրթներկ քսելու ենք...»²⁶:

Մեկ ալլ երկում՝ «Բուլիթիքա ռույասը» («Քաղաքական երազ»), Պարոնյանը դիմում է օբյեկտիվ հակադրությունների, որոնք արտահայտում են եվրոպական երկրների միջև եղած քաղաքականությունների սուր տարբերությունները: Օրինակ, Ֆրանսիան «երբեմն աչ ձեռքը բարձրացնելով դեմքին տխրություն կուգա, երբեմն ձախ ձեռքը վերև պահելով, կը խնդա, ուրեմն աչ և ձախ կողմերը կը ստուգե և աչ կողմը գործին կուգա»²⁷, իսկ Գերմանիան «քունին մեջ ձեռքերով շատ մը շարժումներ կընե, երբեմն ձեռքերը հրացան բռնող մարդու պես կը բռնե, ուրեմն միտք ունի կրակել մեկուն...»²⁸:

Պակաս ուշագրավ չեն նաև համեմատություններն ու լափազանցությունները, որոնցով հարուստ է թե՛ Պարոնյանի, թե՛ Բելիարի ստեղծագործական ներկայակեր. «Այստեղ (Հոմ— Մ. Լ.) թերթի մը տնօրենը հնդկահավի պես ուռած երեւուն համար, քանի մը բարեպաշտ և կրոնասեր մարդիկ այս կառնավալային օրերին գործին օգուտ է ըսելով, սխալմամբ խեղդեր են»²⁹, «Բորուան այնքան բարձրացավ, որ երկայնահասակները նույնիսկ չեն հասնիր կոր. ասոր համար ճյուղները օր ու գիշեր աստիճան կը պատրաստեն»³⁰:

Ի՞նչ Պարոնյանը, և՛ Բելիարը «Թատրոնի» հայատառ-թուրքերեն քաղաքական քրոնիկներում երբեմն ստիպված են եղել խոսել եզովպոսյան լեզվով, որոնց մեջ Պարոնյանի արտահայտությունը՝ «կ'մարի երգիծանքը»՝ քաղա-

²⁵ Նույն տեղում, 8. 11 (բնագիրը հայերեն):

²⁶ Նույն տեղում, 8. V:

²⁷ Նույն տեղում, 24. VI:

²⁸ Նույն տեղում:

²⁹ Նույն տեղում, 1. III:

³⁰ Նույն տեղում:

քական դժվարին կացությունը ստիպել է երգիծաբաններին դիմելու այլաբանության ժանրին:

«Թատրոնի» հայատառ-թուրքերեն քաղաքական քրոնիկները երգիծաթերթի ամենակարևոր բաժինն են: Դրանք ըստ էության ունեն կյանքը վերափոխելու նշանակություն և հենց սրանում է «Թատրոնի» քաղաքական սատիրայի բնորոշ գիծը: Քաղաքական սատիրայի երկրորդ առանձնահատկությունը օրագրային բնույթն է: Օրվա դեպքերը ավելի են ընդգծում, առանձնացնում քրոնիկների ճանաչողական նշանակությունն ու արժեքը:

Հայատառ-թուրքերեն քաղաքական քրոնիկներն ունեն նաև դաստիարակչական նշանակություն: Երգիծաթերթի դեմոկրատական ոգին, հումանիզմը օգնում են ճիշտ ըմբռնելու շահագործող դասի դիտավորությունները, զգալու նրա բարոյական ու ֆիզիկական ոչնչությունը:

Պարոնյանի և Բելիարի հայատառ-թուրքերեն քաղաքական քրոնիկները «Թատրոն» երգիծաթերթի հայերեն նյութերի հետ միասին հեղինակների քաղաքական առաջադեմ հայացքների լավագույն արտահայտություններն են:

ПОЛИТИЧЕСКИЕ ХРОНИКИ НА ТУРЕЦКОМ ЯЗЫКЕ В САТИРИЧЕСКОЙ ГАЗЕТЕ «ТАТРОН»

МАРГАРИТА КРГАТБАШЯН

Резюме

В издаваемой А. Пароняном сатирической газете «Татрон» («Театр») наряду с произведениями, публиковавшимися на армянском языке, печатались также художественные произведения и публицистические очерки, написанные на турецком языке армянскими буквами. Среди этих произведений особого внимания заслуживают политические хроники, которые давали четкое представление о внутренней жизни Турции 70—80-х годов и общественно-политических событиях этих лет.

Публиковавшаяся на страницах «Татрона» политическая сатира на турецком языке охватывала две сферы: разоблачение внутренней ситуации Турции и ее внешней политики и критику позиций европейских держав.

В газете с хрониками на турецком языке выступали и Паронян, и Белиар. Эти политические хроники являются ярчайшим выражением прогрессивных политических взглядов двух западноармянских сатириков.

Политические хроники на турецком языке для «Татрона» написаны блестящим, лаконичным языком. Огромную силу выразительности придают им гиперболы, остроумные сравнения и меткие характеристики.